

1947-ի “ՄԻՈՆ,” ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Երուսաղեմէն՝

Տիար Տիրան Ոսկերիչեան՝ Տիար Դեորզ Զազրեանին (Բարիկ)։

Նիկոսիայէն՝

Ազգ. Բուժարանի Օժանդակ Յանձնախումբ՝ Օր. Այսա Թաւենեանին (Նիկոսիա)։

ՍՏԱՑՈՒԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻԻ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ, *ապ. Վենետիկ ՌՄԶԲ (= 1833), Նուէր Միաբան Ռաֆայէլ Ճենազեանէ։*

THE DOCTRINAL POSITION OF THE ARMENIAN CHURCH, Bishop Tiran, New York, 1947.

ԽԱՂԲԱԿԵԱՆՔ ԿԱՄ ՊՌՈՇԵԱՆՔ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ, Գ. Հատոր, Գա. շեղին Արքեպս. Յովսէփեան, *ապ. Նիւ Եորք, 1942-3։*

ԱՆԿՈՒՄԸ, Առաքել Մ. Քէչեան, *Պուքրէշ, 1946։*

ԱԿՆ ԵՒ ԱԿՆՑԻՆ, Առաքել Մ. Քէչեան, *Պուքրէշ, 1942։*

ՈՒՂԻՆ, Մկրտիչ Անդրանիկ, *Աղեքսանդրիա, 1947։*

ՆՈՐ ԵՐԳԵՐ, օր. 1-11, Համբարձում Պերպրեան, 1931-37, *Պէյրուս։*

ԻՆԸ ՄԵՆԵՐԳ, *տետր Ա., Գ. Մ. Ալեմեան, Փարիզ, 1947։*

Նուէր՝ Պր. Պերճ Մամիկոնեանէ։

RICHARD WAGNER REVOLUTIONNAIRE, par Henry Malherbe, Paris, 1938.

GREUZE ET SON TEMPS, par Camille Maclair, Paris, 1926.

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ

ԼԻԱԿԱՏԱՐ ՅՈՒՑԱԿ ԳԻՐՔԵՐՈՒ

ՍՐՔՈՑ ԶԱԿՈՒԹԱՆՑ ՏՊԱՐԱՆԻՆ

"SION," an Armenian Monthly of Religion, Literature and Philology

Printed in

JERUSALEM — PALESTINE

Ս. Աթոռոյս Կիւլպէնկեան Մատենադարանը ներկայ ամիսով կը բոլորէ իր տասն եւհնգամեակը, սկսեալ իր բացումի օրէն:

Ուրախ ենք յայտնելու որ այս ժամանակաշրջանին Մատենադարանը հետզհետէ կը ցաւ արժեւորել ինքզինք ու իր տեսակով առաջնակարգ դիրք մը զբաւել, ինչպէս է ան ներկայիս բովանդակ Մերձաւոր Արեւելքի մէջ: Պարագայ մը այս՝ որ սահմանուած է յաւերժացնելու յիշատակը Լուսահոգի ու Երանեալ Դուրեան Պատրիարքի, որ ներշնչողը եղաւ Կաթողիկոսութեան, նոյնատեն եւ փառաւորելու անունը Մեծ Բարերար Վսեմ. Ֆալուստ Պէյ Կիւլպէնկեանի, որ պատկառելի նուիրատուութեամբ մը արձանացուց զայն Սիոնի նուիրական այս բարձունքին վրայ:

Երանի՛ անոր որ յիշատակ մ'ունի Սիոնի վրայ...:

Տասնեւհինգ տարուան այս ջրջանին, Մատենադարանը կարելի իր նպաստը բերաւ բոլոր անոնց որ դիմեցին իր հատորներէն օգտուելու եւ լուսաւորուելու, սորվելու եւ սորվեցնելու: Ու կը շարունակէ ան նոյնը ընել հետզհետէ աւելի ճոխացած տուեալներով եւ լաւագոյն պայմաններով ու յարմարութիւններով, որոնք ձեռք բերուած են ու կը բերուին Ս. Աթոռոյս Ազնուական Բարերարին օժանդակութեամբ եւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր ու Տնօրէն Ժողովոյ բարեհաճ կարգադրութիւններով: Վասնզի Ս. Յակոբեանց Մենաստանը կ'ուզէ հաւատարմօրէն հետեւիլ իր դարաւոր աւանդութեան ու մնալ իբրեւ մէկը Հայութեան լուսատու կեդրոններէն եւ Հայ Մշակույթի արժէքներուն զանձապահը՝ միջազգային ու սրբազան այս քաղաքին մէջ:

Այս առթիւ նորին Ամեն. Ս. Պատրիարք Հօր արտօնութեամբ կը յայտարարենք՝

- 1) — Եթէ կան անձեր կամ Միութիւններ որ զիրքերու կամ թերթերու հաւաքածոներ ունին ու կ'ուզեն վաճառել զանոնք՝ խող հաճին գրել մեզի եւ ներկայացնել իրենց պայմանները:
- 2) — Կը խնդրենք բոլոր գրողներէն ու հրատարակիչներէն որ բարի ըլլան իրենց հեղինակութիւններէն կամ հրատարակութիւններէն գոնէ մէկական օրինակ դրկել յատկապէս Մատենադարանին, անկախաբար ՍիՈՒ ամսագրին ղրկուածներէն:
- 3) — Դրասէր յարգոյ հասարակութեան կը ծանուցանենք թէ՛ Մատենադարանը բաց է ամենուն առջեւ անխտիր, ամէն օր որոշ պահերու մէջ:

ՏԵՍՈՒՉ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ՏԻՐԱՅՐ ՎՐԴ. ՏԵՐՎԻՇԵԱՆ